ՉԱՐԴՍ ՈՒ ԴԱՐԴՍ

Անուշաբոյր ծաղիկներից
Միայն վարդը սիրեցի ։
Իմ ցաւագար , տանջւած սրտից
Նորան մի երգ ձօնեցի ։
Սակայն սիրուն , անուշ վարդը
Ականջ չ՝արաւ իմ երգին ,
Նա չը սփոփեց սրտիս դարդը ,
Դարման չ՝արաւ իմ վէրքին ։
Սիրաբորբոք եւ յուսահատ
Ես լաց եղայ , ողբացի ,
Արցունքներով իմ յորդառատ
Ինքոյչ վարդը թրջեցի ...
— Անմի՛տ պօէտ , ի՛նչ ես լալիս ,
Արցունքներով ինձ ցօղում ։
Է՞ր ես լալիս եւ վայ տալիս ,
Հանգիստ սիրտըս վրդովում ։
Քե՛զ համար չէ անուշ վարդը ,
Քե՛զ համար չէ նա բացւել ։
Ծաղիկների չքեղ զարդը
Քե՛զ համար չէ փթթել ։
Ինձ կը քաղի մեծատունը
Գոհարներով ու ոսկով ,
Ինձ կը տանի նա իր տունը ,
Կը պահպանի խընամքով ։
Ես կը բազմեմ չքեղազարդ
Ու փառահեղ դահլիճում ,
Ես կը ժպտամ ուրախ , զըւարթ՝
Ոսկեջրած բաժակում ։
Շուք ու փայլով շրջապատւած՝
Ես կը հրճւեմ խնդագին ,
Իսկ դու , պօէ՛տ , վարդից զրկւած՝
Ի զուր կը լաս դառնագին ...

ՑԱՐՈՒԹԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

6/VIII, 1991 թ.
Ախալքալաք ։